ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԺԵԼԻԿԱ ԳԱԳԻԿԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԱՌԻՏՈԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԺԹ. 00.03. «Սոցիալական հոգեբանություն
(միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն)»
մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սրբուհի Ռաֆիկի Գևորգյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Նաիրա Ռաֆիկի Հակոբյան**
	Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Լիլիթ Յուրիկի Մկրտումյան**
Առաջատար կազմակերպություն՝	Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014 թ. նոյեմբերի 11-ին, ժամը 12.00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-ի փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. հոկտեմբերի 11-ին:

Փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Կ. Ե. Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից աշխարհում, որտեղ մեծ արժեք ունի մարդկային կյանքն ու դրա անձեռնմխելիությունը, քրեակատարողական համակարգի բարեփոխման հարցը բավական սուր է դրված: Ներկայումս պենիտենցիար ծառայության հիմնախնդիրն է դարձել ազատազրկման վայրերում անձի ֆիզիկական և հոգեբանական ամբողջականությունն ու անվտանգությունն ապահովելը: Այդ գործընթացում իր մեծ մասնաբաժին ունի դատապարտյալների առտոագրեսիվ վարքի կանխատեսումն ու պրոֆիլակտիկան:

Սոցիալական մեկուսացումն առհասարակ, և քրեակատարողական (ՔԿ) հիմնարկները մասնավորապես, կեցության համար ծանր պայմաններ ունեն, որում հայտնվելը բացասաբար է ազդում դրանցում գտնվող անձանց հոգեկանի վրա:

ՔԿ հիմնարկի պայմանները, ըստ էության, էքստրեմալ են, քանի որ կրում են հարկադիր բնույթ, երբ հիմնականում հաշվի չեն առնվում դատապարտյալների պահանջմունքներն ու ցանկությունները, որին գումարվում են նաև մեծաքանակ սթրեսային գործոնները՝ կյանքի նախկին ռիթմի փոփոխությունը, բաժանումն ընտանիքից և հարազատներից, ՔԿ աշխատակիցներին ենթարկվելու անհրաժեշտությունը, սեփական կյանքի և առողջության նկատմամբ մշտական սպառնալիքի առկայությունը և այլն:

Ազատազրկման վայրերում նմանատիպ հոգեբանական տրավմաների և սահմանափակումների հետևանքով ընկնում է դատապարտյալների ինքնագնահատականը և անվտանգության զգացումը: Սրան գումարվում է նաև հարկադիր մտերմությունն այլ դատապարտյալների հետ, ՔԿ աշխատակիցների մշտական վերահսկողությունը, որը հանգեցնում է նրան, որ յուրաքանչյուրի վարքը դառնում է պաշտոնական կամ ոչ պաշտոնական քննարկումների առարկա: Այս ամենի հետևանքով դատապարտյալների մոտ ի հայտ է գալիս ներքին անինքնավստահություն, իմպուլսիվ գործողությունների և արարքների նկատմամբ հակվածություն:

Արդյունքում, սոցիալական մեկուսացման պայմաններում հայտնված դատապարտյալների մոտ դիտվում են տագնապայնություն, իմպուլսիվություն, ագրեսիվություն և մի շարք այլ անձնային-հոգեբանական փոփոխություններ:

Վերը նշվածի համատեքստում, վերջին տարիներին հատկապես խիստ արդիական է դարձել դատապարտյալների շրջանում հենց առտոագրեսիվ վարքի հիմնախնդիրը՝ կապված դրանց տարածվածության աստիճանով, ինչպես նաև դրսևորման լայն սպեկտորով:

Մասնավորապես, ըստ ՀՀ ԱՆ տվյալների միայն 2000-2013թթ դատապարտյալներն իրականացրել են սուիցիդի 51 փորձ, սակայն ինքնավնասումներին վերաբերող համակարգված վիճակագրության մասին խոսք չկա, թեև հայտնի են սոցիալական հնչեղություն ստացած դրանց բազմաթիվ դեպքեր՝ հացադուլներից ու զանազան առարկաներ կուլ տալուց մինչև սեփական աչքերի կամ բերանի կարելը:

Սրա հետ մեկտեղ, ներկայումս բացակայում է նաև այս երևույթի մանրամասն կլինիկահոգեբանական նկարագրություն՝ չնայած դրա նկատմամբ մեծ հետաքրքրությանը տարբեր ոլորտի մասնագետների կողմից, որն էլ խիստ ակտուալ

է դարձնում այս հետազոտությունը: Ավելին, այսօր գործնականում չկան վալիդ հոգեբանական մեթոդիկաներ, որոնք ուղղված կլինեն աուտոագրեսիայի դրսևորումների ուսումնասիրմանն ու բացահայտմանը, իսկ այս ոլորտում կատարված ուսումնասիրությունների մեծ մասը բավարարվում է աուտոագրեսիա իրականացրած անձանց սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների վերլուծությամբ, որից պարզ չի դառնում արդյոք այդ առանձնահատկություններն անփոփոխ են մնում աուտոագրեսիա իրականցնելուց հետո և ինչքանով են դրանք հնարավոր դատապարտյալների աուտոագրեսիվ վարքը կանխատեսելու առումով:

Այսինքն՝ ազատազրկման վայրերում աուտոագրեսիվ վարքի հիմնախնդիրը ոչ միայն թեմայի վերաբերյալ ընդհանուր գիտական մոտեցման ստեղծումն է, այլ նաև դրա ախտորոշման կազմակերպումը, ինչը հնարավորություն կտա դուրս բերել այն նախանշանները, որոնք բնորոշ են աուտոագրեսիվ վարք կրողներին, և հնարավորություն կընձեռի համապատասխան դաստիարակչական և հոգեբանական աջակցություն տրամադրել:

Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ՔԿ հիմնարկների հոգեբանը նույնիսկ օպտիմալ ծանրաբեռնվածության դեպքում (յուրաքանչյուր 300 անձին 1 մասնագետ) չի կարող մշտապես վերահսկել բոլոր դատապարտյալներին, հետևաբար, կանխարգելող միջոցառումներն արդյունավետ են միայն այն ժամանակ, երբ հստակ ուղղված են մարդկանց որոշակի խմբին, որոնց մոտ առկա են աուտոագրեսիվ միտումներն ուժեղացնող կամ թուլացնող մի խումբ նախանշաններ, ինչը թույլ կտա իրականացնել հստակ ուղղորդված պրոֆիլակտիկ միջոցառումներ՝ նախքան դատապարտյալի աուտոագրեսիվ գործողությունների իրականացումը:

Առաջնորդվելով վերոշարադրյալից՝ մեր հետազոտության արդիականությունը պայմանավորված է գիտականորեն հիմնավորվող և փորձարարական ճանապարհով ստուգվող համապատասխան հոգեշտկողական ծրագիր մշակելու անհրաժեշտությամբ, ինչը թույլ կտա կանխել դատապարտյալների՝ սեփական առողջությունն ու կյանքը վնասելուն ուղղված գործողությունները, դրանց բացասական հետևանքները և հետագա կրկնման հավանականությունը:

Հետազոտության օբյեկտը ՔԿ հիմնարկներում իրենց պատիժը կրող 18-58 տարեկան աուտոագրեսիվ վարքի հակվածություն ունեցող դատապարտյալներն են:

Հետազոտության առարկան ՔԿ հիմնարկներում իրենց պատիժը կրող դատապարտյալների՝ սոցիալ-հոգեբանական և անձնային գործոններով պայմանավորված աուտոագրեսիվ վարքի ձևավորման և իրականացման պատճառների և մեխանիզմների ամբողջությունն է:

Հետազոտության գիտական վարկածը: Մեր կարծիքով ազատազրկման ենթարկված դատապարտյալների մոտ կախված անձի հոգեհուզական բացասական վիճակից, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական ու սոցիալ-ժողովրդագրական գործոններից՝ մեծանում է աուտոագրեսիվ վարքի ձևավորման հավանականությունը և աուտոագրեսիվ հակումների դրսևորումը:

Հետազոտության նպատակն է՝ հետազոտել և հիմնավորել ՔԿ հիմնարկներում գտնվող դատապարտյալների աուտոագրեսիվ վարքի ձևավորմանը նպաստող սոցիալ-հոգեբանական և սոցիալ-ժողովրդագրական գործոնները:

Հետազոտության նպատակից բխում են հետևյալ **խնդիրները**.

1. Հիմնախնդրի մշակվածության աստիճանը բնորոշելու համար ուսումնասիրել և ընդհանրացնել աուտոագրեսիվ վարքի դրսևորումների վերաբերյալ

պատմական աղբյուրները և գիտական հիմնավորումները՝ առանձնացնելով աուտոագրեսիվ վարքի հիմնական տեսակները:

2. Իրականացնել հասարակությունից հարկադիր մեկուսացման ենթարկված անձանց մոտ առաջացած բացասական փոփոխությունների վերաբերյալ տեսական վերլուծություն:

3. Ուսումնասիրել դատապարտյալների աուտոագրեսիվ գործողությունները պայմանավորող անձնային, սոցիալ-հոգեբանական և իրադրային գործոնները:

4. Ընտրել և հիմնավորել մեթոդիկաների համակարգ, որը թույլ կտա ուսումնասիրել դատապարտյալների աուտոագրեսիվ վարքի դրսևորումները:

5. Փորձարարական ճանապարհով ճշգրտել աուտոագրեսիվ գործողությունների իրականացման պատճառներն ու հիմքերը:

6. Հետազոտության արդյունքների հիման վրա մշակել գիտականորեն հիմնավորված գործնական առաջարկներ, որոնք ուղղված կլինեն դատապարտյալների աուտոագրեսիվ վարքի կանխատեսմանն ու հոգեշտկմանը:

Հետազոտության տեսական նշանակությունը: ՀՀ ՔԿ հիմնարկներում կատարված վերլուծությունները և դրանց ամփոփումները, դատապրտյալների աուտոագրեսիվ վարքի բացահայտված մեխանիզմները, բովանդակությունը, ինչպես նաև ձևավորման գործոնների առանձնահատկությունները հնարավորություն են ընձեռում տեսականորեն հիմնավորել դրանց փոխազդեցություններն ու փոխկապակցությունները՝ հաղթահարելի դարձնելով աուտոագրեսիվ վարքի կանխարգելման գործընթացը:

Հետազոտության գործնական նշանակությունը: Ատենախոսությունում կատարված հետազոտական աշխատանքի և ստացված արդյունքների հիման վրա ՔԿ հիմնարկի տարաբնույթ ծառայությունների աշխատակիցների և առաջին հերթին հոգեբանների համար մշակվել են գործնական առաջարկներ, որոնք թույլ կտան բարձրացնել ՔԿ հիմնարկներում դատապարտյալների աուտոագրեսիվ վարքի ձևավորման և կանխատեսման հավաստիությունը, հետևաբար նաև կանխել վերջիններիս դրսևորումները, ինչպես նաև բարելավել աուտոագրեսիվ վարք ունեցողների նկատմամբ տարվող հոգեշտկողական աշխատանքները: Ստացված արդյունքները կարող են օգտագործվել աուտոագրեսիայի հիմնախնդրով զբաղվող հետագա աշխատություններում, ինչպես նաև կրթական հաստատություններում՝ «Իրավաբանական հոգեբանություն», «Պենիտենցիար հոգեբանություն», «Դևիանտ վարքի հոգեբանություն», «Սուիցիդալ վարքի հոգեբանություն» առարկաների շրջանակներում:

Հետազոտության տեսամեթոդական հիմք են ծառայել աուտոագրեսիվ վարքի, ինչպես նաև սոցիալական մեկուսացման պայմանների ազդեցության հիմնախնդիրների վերաբերյալ ուսումնասիրությունները, որոնց անդրադարձել են ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական մի շարք հեղինակներ, ինչպիսիք են՝ Զ. Ֆրեյդը, Կ. Մեննինգերը, Վ. Ֆրանկլը, Բ. Բետելհայմը, Ջ. Գիբսոնը, Հ. Շտեյնբախը, Ֆ. Զիմբարդոն, Ջ. Քիլթին, Ա. Գլոտոչկինը, Ա. Ամբրումովան, Վ. Եֆրեմովը, Վ. Վոլկովը, Ի. Բոյկոն, Վ. Լեբեդևը, Լ. Գրիմակը, Ն. Խրյաշևան, Ա. Ուշատիկովը, Յու. Անտոնյանը, Ա.Արզումանյանը, Ս.Գևորգյանը, Ն.Հակոբյանը, Մ.Մկրտումյանը, Վ.Սարգսյանը, Կ. Վարդանյանը՝ փաստելով այն մասին, որ հասարակությունից հարկադիր մեկուսացումը կարող է իր դեստրուկտիվ ազդեցությունը թողնել անձի դրդապատճառային, իմացական, հուզակամային և

վարքային ոլորտների վրա՝ արտահայտվելով մի շարք բացասական փոփոխություններով, այդ թվում՝ սեփական անձին ուղղված ագրեսիայով:

Հետազոտության ընթացքում օգտագործված մեթոդները.

Նպատակ ունենալով ուսումնասիրել սոցիալական մեկուսացման պայմաններում հայտնված դատապարտյալների հոգեկանի ոլորտում տեղի ունեցող փոփոխությունները և հոգեբանական հետևանքները՝ օգտագործել ենք մի շարք հոգեբանական մեթոդներ: Աուտոագրեսիվ վարքի ձևավորմանը նպաստող անձնային գործոնների ախտորոշման համար կիրառվել է Ռ.Քետելի 16 գործոնային անձնային հարցարանը, աուտոագրեսիա իրականացրած դատապարտյալների ադապտացիոն հնարավորությունների գնահատման համար՝ Ա. Մակլակովի և Ս. Չերմյանինի կողմից մշակված «Ադապտիվություն» բազմամակարդակ անձնային հարցարանը, իսկ հոգեհուզական վիճակի գնահատման համար՝ Լյուշերի գունային թեստը:

Թեստերի կիրառումն իրականացվել է վերլուծական, համադրական և համալիր մոտեցումների հիման վրա: Վերլուծական մոտեցումը ենթադրում է առանձին հոգեբանական ցուցանիշների ուսումնասիրում ու գնահատում: Համադրական մոտեցումը՝ ամբողջական գործունեության և դրա կարևոր տարրերի ուսումնասիրությունն է, իսկ համալիր մոտեցումը միավորում է վերլուծական և համադրական մոտեցումները, այսինքն՝ հոգեբանական և սոցիալական գործընթացներն ուսումնասիրվում են ինչպես մասնավոր, այնպես էլ ամբողջական դրսևորումներով և քանակական ու որակական այլ ցուցանիշներով:

Բացի հոգեախտորոշիչ մեթոդներից օգտագործվել են նաև ավանդական էմպիրիկ՝ զրույցի, դիտման, սոցիոմետրիական, փորձագիտական գնահատման, դատապարտյալների անձնական գործերի ուսումնասիրության մեթոդներ:

Հետազոտության փուլերը: Հետազոտություններն անցկացվել են 2006 թվականից: Կատարվել են տեսական վերլուծություններ, գիտափորձեր, հետազոտության ստացված արդյունքները ներկայացրել ենք նաև զեկույցների և հոդվածների տեսքով:

Հետազոտությունն իրականացվել է 4 փուլով: Առաջին փուլում կատարվել է աուտոագրեսիվ վարքի հոգեբանական հիմքերի ժամանակակից ուղղընթացների վերաբերյալ առկա գրականության տվյալների վերլուծություն և ընդհանրացում: Ըստ այդմ, աուտոագրեսիայի առաջացման պատճառների մեկնաբանումը կառուցվել է չորս հիմնական ոլորտների ուսումնասիրության հիման վրա.

1. ընտանեկան անամնեզում ռիսկի գործոնների առկայություն,
2. աուտոագրեսիվ վարքի ձևավորմանը նպաստող անձնային գործոնների վերլուծություն,
3. սոցիալական միջավայրի գործոնների բացահայտում և գնահատում,
4. դատապարտյալների հոգեհուզական վիճակի բացահայտում՝ որպես վերը նշված գործոնների ամբողջական ազդեցության արդյունք:

Երկրորդ փուլում իրականացվել է հետազոտություն, որտեղ ներառել ենք դատապարտյալների վերաբերյալ սոցիոմետրիկական, դիտման, ինտերվյուի, զրույցի մեթոդներ, ինչպես նաև հոգեբանական թեստավորման միջոցով ստացված արդյունքների վերլուծություն:

Երրորդ փուլում կատարվել է աուտոագրեսիվ վարքը պայմանավորող գործոնների ազդեցության վիճակագրական վերլուծություն (կորելյացիա, դիսկրիմինանտ վերլուծություն, համալուծության աղյուսակների վերլուծություն):

Չորրորդ փուլում մշակվել է սոցիալական մեկուսացման պայմաններում դատապարտյալների աուտոագրեսիայի հիմքերը մեկնաբանող ալգորիթմ:

Հետազոտության ընտրանքը: Հետազոտության մեջ ընդգրկել ենք ՔԿ հիմնարկներում գտնվող 481 դատապարտյալներ, որոնցից աուտոագրեսիվ վարք են ցուցաբերել 47-ը, (նրանցից 5-ը իրականացրել են սուիցիդ):

Հետազոտության գիտական նորույթը:

Հիմք ունենալով համաշխարհային առաջատար փորձը՝ առաջին անգամ ՀՀ ՔԿ հիմնարկներում ուսումնասիրվել են դատապարտյալների աուտոագրեսիվ վարքի սոցիալ-հոգեբանական մեխանիզմները, դրանց փոխազդեցություններն ու փոխկապվածությունները, մշակվել է համակարգված մեթոդիկաների խումբ, ինչը հնարավորություն է ընձեռել ախտորոշել և կանխատեսել մեր իրականությունում ՔԿ հիմնարկներում դատապարտյալների աուտոագրեսիվ վարքը, որի արդյունքում առաջ են քաշվել դատապարտյալների աուտոագրեսիվ վարքի կանխարգելմանն ուղղված գիտագործնական առաջարկներ:

Հետազոտության փորձագիտությունը և տվյալների հուսալիությունը: Հետազոտության իրականացման ընթացքն ու ստացված արդյունքները պարբերաբար քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Զարգացման և կիրառական հոգեբանություն, ինչպես նաև ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի «Սոցիալական հոգեբանություն» ամբիոններում, զեկուցվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90 ամյակին նվիրված գիտաժողովի շրջանակներում:

Ստացված արդյունքների հուսալիությունը պայմանավորված է կիրառված մեթոդների վալիդության աստիճանով: Ուսումնասիրությունների ընթացքում պահպանվել են հետազոտության անցկացման պայմանների և իրադրության միակերպությունը, ստանդարտացված է եղել հետազոտության ընթացքը, ինչը ենթադրում է, որ հոգեբանական մեթոդիկաները կիրառվել են որոշակի հերթականությամբ, ժամանակային նույն հատվածում և հստակ կարգավորված ընդմիջումներով: Հետազոտության անհրաժեշտ նախապայման է եղել նաև մեթոդիկաների և դրանց հրահանգների ստանդարտությունը:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Սոցիալական մեկուսացումը, հարմարման նոր պայմանները կեցության համար ծանր են, էքստրեմալ և կրում են հակադիր բնույթ ու բացասաբար են ազդում դատապարտյալների հոգեկանի վրա:
2. Հասարակությունից մեկուսացված անհատների (դատապարտյալների) աուտոագրեսիվ վարքային դրսևորումներն ինքնատիպ են և առավելապես պայմանավորված են հիշյալ անձանց բացասական հոգեբանական փոփոխություններով:
3. Հասարակությունից մեկուսացված դատապարտյալների աուտոագրեսիվ վարքի ձևավորման և դրսևորման յուրատիպ առանձնահատկությունները պայմանավորված են անձնային գործոնների և սոցիալ-հոգեբանական պայմանների, ինչպես նաև իրադրային փոխազդեցության արդյունքով:
4. Ժամանակավոր պատիժը կրող դատապարտյալների աուտոագրեսիվ վարքային դրսևորումներն արտահայտվում են.

ա) ագրեսիվության, տագնապայնության որոշակի բարձր ցուցանիշներով և ոչ համարժեք գնահատականով,
բ) սոցիալական մեկուսացման պայմաններում դատապարտյալների աուտոագրեսիան ձևավորվում է միկրոսոցիալական միջավայրի հետևյալ գործոնների ազդեցությամբ.

- ✓ Այլ դատապարտյալների հետ փոխհարաբերություններ
- ✓ Ադմինիստրացիայի աշխատակիցների հետ փոխհարաբերություններ:

5. Փորձարարական ճանապարհով ստացված արդյունքների հիման վրա մշակված և համակարգված կանխարգելմանն ուղղված գիտագործնական առաջարկները հետապնդում են.

ա) հասարակությունից մեկուսացված և իրենց ժամանակավոր պատիժը կրող անձանց աուտոագրեսիվ վարքի կանխարգելման և հոգեշտկման աշխատանքների ճիշտ կազմակերպում,
բ) ՔԿ հիմնարկների սոցիալական, իրավական և հոգեբանական ծառայության աշխատակիցների, և մասնավորապես՝ հոգեբանների գործունեությանը նպաստող մասնագիտական աջակցություն:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածության** մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված օբյեկտը, առարկան, առաջադրված է գիտական վարկածը, սահմանված են հետազոտության նպատակն ու խնդիրները, ներկայացված են տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության տեսամեթոդաբանական հիմքերն ու մեթոդները, գիտական նորույթը, սահմանված են պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության փորձագիտությունն ու տվյալների հուսալիությունը, ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին «Սոցիալական մեկուսացման պայմաններում աուտոագրեսիվ վարքի ուսումնասիրման տեսական վերլուծություն» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին «**Աուտոագրեսիվ վարքի տեսական-հոգեբանական եզրերը**» ենթագլխում բնորոշվում է աուտոագրեսիա հասկացությունը, ինչպես նաև սահմանազատվում է «սուիցիդալ ինքնավնասումներ» հասկացությունը դրան շատ մոտ «պարասուիցիդալ» և «ոչ սուիցիդալ ինքնավնասումներ» հասկացություններից:

Այս ենթագլխում անդրադարձ է կատարվել և վերլուծության ենթարկվել մի շարք հեղինակների մեկնաբանությունները «ինքնավնասումներ» երևույթի վերաբերյալ՝ հանգելով այն եզրակացության, որ աուտոագրեսիան ագրեսիայի տեսակներից մեկն է, որի դեպքում սուբյեկտի գործողություններն ուղղված են ինքն իրեն վնաս հասցնելուն, և որի դրսևորումների սպեկտորը բավական լայն է՝ ինքն իրեն բազմապիսի ֆիզիկական վնասվածքներ հասցնելուց մինչև ինքնասպանություն:

Երկրորդ **«Աուտոագրեսիվ վարքի հոգեբանության պատմական ակնարկ»** ենթագլխում քննարկվում է աուտոագրեսիա երևույթի տարածվածությունը հասարակության զարգացման տարբեր ժամանակահատվածներում՝ անտիկ

դարաշրջանից մինչև մեր օրերը, տարբեր տարածաշրջաններում՝ Ամազոնիայում, Ավստրալիայում, Առաջավոր Ասիայում, Եգիպտոսում և հասարակության տարբեր դասակարգերի մոտ՝ կրոնավորներ, դատապարտյալներ, նորաձևության միտումներին հետևողներ:

Երրորդ **«Անձի վրա հասարակությունից հարկադիր մեկուսացման ազդեցության հոգեբանական վերլուծություն»** ենթագլխում ներկայացված են փակ տարածական մեկուսացման պայմաններում գտնվող մարդկանց վարքի և ապրումների առանձնահատկությունների վերաբերյալ վերջին տասնամյակներում մի շարք հեղինակների ուսումնասիրությունները, ինչպիսիք են Ն. Խրյաշևան, Վ. Լեբեդևը, Մ. Խանանաշվիլին, Դ. Քլեմերը, Յ. Գալտունգը, Կ. Էյխմանը, Է. Գոֆմանը, Խ. Զերը, Բ. Վալիգուրան, Ֆ. Զիրմբարդոն, Յու. Անտոնյանը, Ա. Գլոտոչկինը, Վ. Պիրոժկովը, Վ. Անդրեևը, Դ. Սոչիվկոն, Յ. Մակարովան, Ե. Չերնիշովան, Մ. Դեբոլսկին, Մ. Կուզնեցովան, Վ. Յակովլևը, Ա. Ալեքսեևը և այլք:

Թեմայի վերաբերյալ գրականության վերլուծությունը թույլ տվեց եզրակացնել, որ հասարակությունից հարկադիր մեկուսացումը, որպես կանոն, բացասաբար է անդրադառնում մարդու հոգեկանի վրա՝ դեստրուկտիվ փոփոխություններ առաջացնելով անձի վարքում, իմացական, մոտիվացիոն-իմաստային և հուզական ոլորտներում:

Սոցիալական մեկուսացման պայմաններում դեստրուկտիվ հետևանքները դրսևորվում են անձի և նրա վարքի հետևյալ բաղադրիչների փոփոխությամբ. դրդապատճառաարժեքային ոլորտում՝ կենսական պլանների և սոցիալական ուղղվածության մինիմալիզացում, իմացական ոլորտում՝ անադեկվատ պատկերացում սեփական անձի, հնարավորությունների և շրջապատող իրականության մասին, հուզակամային ոլորտում՝ ինքնագնահատականի անկում, տագնապայնություն, ֆրուստրացիա, դեպրեսիա, վարքում՝ արտաքին ֆիզիկական և վերբալ ագրեսիա և աուտոագրեսիա:

Չորրորդ **«Սոցիալական մեկուսացման պայմաններում դատապարտյալների աուտոագրեսիվ վարքի առանձնահատկությունները»** ենթագլխում ներկայացված են մի շարք հեղինակների կողմից առաջարկված աուտոագրեսիվ վարքի դասակարգումներ, վերջինիս իրականացման հիմնական մոտիվները, պատճառներն ու նպատակները:

Ամփոփելով առաջին գլուխը նշենք, որ ազատազրկման վայրերում աուտոագրեսիվ դրսևորումների վերաբերյալ գրականության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դատապարտյալները համարվում են ռիսկային խումբ: Ընդ որում, ազատազրկման վայրերում առավել լայն տարածում ունեն ինքնավնասումները, որոնք հաճախ դատապարտյալների կողմից իրականացվում են իրենց որոշակի նպատակներին հասնելու համար:

Հետևաբար դատապարտյալների աուտոագրեսիվ վարքը կարելի է բնորոշել որպես անհատի գիտակցված գործունեություն՝ ուղղված ինքն իրեն ֆիզիկական վնաս պատճառելուն, որը տվյալ անձի համար կանխատեսելի է և ունի իր համար ցանկալի հետևանքներ:

Աուտոագրեսիվ մտադրությունների և դրսևորումների ռիսկը մեծ է պատժի կրման սկզբնական շրջանում՝ ազատազրկման պայմաններին դատապարտյալի հարմարման ժամանակահատվածում, որը հատկապես կարևոր է հաշվի առնել հոգեշտկողական աշխատանքներ իրականացնելիս:

Բացի այդ, աուտոագրեսիայի իրականացման ռիսկ կա նաև պատժի կրման վերջնական փուլում, երբ դատապարտյալն սկսում է պլանավորել իր կյանքն ազատության մեջ: Սոցիալապես նշանակալի կապերի խաթարումը կամ բացակայությունը, ազատության մեջ կյանքի փոփոխվող պայմաններին հարմարվելու անկարողությունը, նյութական հիմքի (բնակության վայր, աշխատանք) բացակայությունը դատապարտյալի ռեսոցիալիզացիայի գործընթացում կարող են հանգեցնել աուտոագրեսիվ մտադրությունների:

Ատենախոսական աշխատանքի երկրորդ՝ «Աուտոագրեսիվ վարքի հոգեբանական հիմքերի հետազոտման կազմակերպումն ու մեթոդները» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին **«Հետազոտության կառուցվածքը, ընտրանքի համառոտ բնութագիրը»** ենթագլխում նկարագրված է հետազոտության կազմակերպման ընթացքը և ընտրանքի ընդհանուր սոցիալ-ժողովրդագրական տվյալների տոկոսային հարաբերակցությունը:

Մեր կողմից իրականացված հետազոտությունը ներառել է սոցիալական մեկուսացման պայմաններում աուտոագրեսիա իրականացրած դատապարտյալների հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրություն, ինչպես նաև դրա համեմատությունը աուտոագրեսիվ վարք չիրականացրած դատապարտյալների հետ:

Քանի որ դատապարտյալների՝ ՔԿ հիմնարկ մուտք գործելու սկզբնական պահին չէր կարելի վստահաբար ասել, թե նրանցից ով է առավել հակված աուտոագրեսիա իրականացնելուն, իսկ ով՝ ոչ, այդ իսկ պատճառով գնահատվել է դատապարտյալների հարաբերականորեն մեծ ընտրանք: Ստացված արդյունքների հիման վրա ստեղծվել է համակարգչային տվյալների բազա, որի հիման վրա էլ իրականացվել է աուտոագրեսիա իրականացրած և չիրականացրած դատապարտյալների համեմատական վերլուծություն:

Հետազոտությունն իրականացնելու համար ընտրվել են կիսաբաց տիպի ՔԿ հիմնարկում գտնվող 481 դատապարտյալներ, որոնցից աուտոագրեսիվ վարք են ցուցաբերել 47-ը (նրանցից 5-ը իրականացրել են սուիցիդ):

Կատարված վերլուծությունը ցույց տվեց, որ աուտոագրեսիա իրականացրած դատապարտյալների միջին տարիքը 36,8 է, 51%-ը ամուսնական կապեր չունի (պատժի կրման ժամանակ), 51%-ը երեխաներ չունի, մոտ 63%-ը ունի միջնակարգ կրթություն, իսկ աշխատանք չունեցողների տոկոսը 59,8 է:

Ըստ դատվածության՝ աուտոագրեսիա իրականացրած դատապարտյալների ստվար մասը (48,3%) սոցիալական մեկուսացման պայմաններում է հայտնվել առաջին անգամ, իսկ ըստ պատժաչափի՝ մինչև 5 տարի (47,9%):

Աուտոագրեսիա իրականացրած դատապարտյալների մեծ մասը պատիժ է կրում մարդու սեփականության դեմ ուղղված հանցագործությունների համար: Դրան հաջորդում են կյանքին ու առողջությանն ուղղված հանցագործությունները, այնուհետև անձի սեռական անձեռնմխելիության ու ազատության դեմ ուղղված հանցագործությունները, և վերջապես, հասարակական անվտանգությանն ուղղված հանցագործությունները: Նշված հանցագործությունների համար դատապարտվածները կազմում են պատիժը կրող անձանց ընդհանուր թվի ավելի քան 90%-ը:

Երկրորդ **«Հետազոտության մեթոդները»** ենթագլխում նկարագրված են հետազոտության ընթացքում կիրառված մեթոդներն ու մեթոդիկաները: Սոցիալական

մեկուսացման պայմաններում հայտնված դատապարտյալների հոգեկանի ոլորտում տեղի ունեցած փոփոխությունները և հոգեբանական հետևանքներն ուսումնասիրելու նպատակով հետազոտությունը իրականացվել է մի շարք հոգեբանական մեթոդների օգնությամբ՝ Լյուշերի թեստ, Քեթելի 16FP հարցարան, «Ադապտիվություն» մեթոդիկա: Բացի հոգեախտորոշիչ մեթոդներից օգտագործվել են նաև ավանդական էմպիրիկ մեթոդներ՝ դիտում, զրույց, էքսպերտային գնահատական, դատապարտյալների անձնական գործերի ուսումնասիրություն և փաստաթղթերի վերլուծություն, որոնք հնարավորություն են տալիս անձի հոգեկան որակների վերաբերյալ ստանալ խորը և որակական գնահատական:

Դատապարտյալների աուտոագրեսիվ վարքի հոգեբանական հիմքերը հասկանալու համար իրականցվող հետազոտությունը կատարվել է 4 փուլով: Առաջին փուլում, հաշվի առնելով հետազոտության նպատակն ու խնդիրները, իրականացվել է աուտոագրեսիվ վարքի հոգեբանական հիմքերի ժամանակակից ուղղընթացների վերաբերյալ առկա գրականության տվյալների վերլուծություն և ընդհանրացում: Ըստ այդմ, աուտոագրեսիայի պատճառների առաջացման ուսումնասիրությունը կառուցվում է չորս հիմնական ոլորտների ուսումնասիրության հիման վրա.

1. ընտանեկան անամնեզում ռիսկի գործոնների առկայություն,

2. աուտոագրեսիվ վարքի ձևավորմանը նպաստող անձնային գծերի վերլուծություն,

3. սոցիալական միջավայրի գործոնների իհայտում և գնահատում,

4. դատապարտյալի հոգեհուզական վիճակը՝ որպես վերը նշված գործոնների ամբողջական ազդեցության արդյունք:

Երկրորդ փուլում իրականացվել է հետազոտություն, որը ներառում է դատապարտյալների վերաբերյալ սոցիոմետրիկ մեթոդի, դիտման, ինտերվյուի, զրույցի, ինչպես նաև հոգեբանական թեստավորման միջոցով ստացված արդյունքներ:

Երրորդ փուլում կատարվել է աուտոագրեսիվ վարքի դրսևորման հավանականության վրա կանխատեսող չափանիշների ազդեցության վիճակագրական վերլուծություն (կորելյացիա, դիսկրիմինանտ վերլուծություն, համալուծության աղյուսակների վերլուծություն):

Չորրորդ փուլում մշակվել է սոցիալական մեկուսացման պայմաններում դատապարտյալների աուտոագրեսիայի կանխատեսումը չափորոշող ալգորիթմ:

Այսպիսով, աուտոագրեսիայի հոգեբանական հիմքերի մեկնաբանման համար ընտրվել և հիմնավորվել են միջոցներ, այն է՝ հոգեախտորոշիչ մեթոդիկաների և ախտորոշիչ ալգորիթմների անհրաժեշտ համաշար, որը թույլ կտա բավարար ճշգրտությամբ բացահայտել ու մեկնաբանել սոցիալական մեկուսացման պայմաններում դատապարտյալների աուտոագրեսիվ վարքի հիմքերը:

Երրորդ **«Հետազոտության արդյունքների մշակման վիճակագրական մեթոդները»** ենթագլխում նկարագրված են այն վիճակագրական մեթոդները, որոնց օգնությամբ վերլուծվել են ստացված արդյունքները: Դրանք են.

1. Նոմինալ սանդղակներով փոփոխականների կախվածությունների վերլուծությունների համար կիրառվել է Պիրսոնի x^2 հայտանիշը և ասոցիացիայի φ գործակիցը: Վիճակագրական նշանակալիությունը գնահատվել է Ստյուդենտի t հայտանիշով:

2. Միջակայքային և նոմինալ սանդղակներով փոփոխականների կախվածությունը վերլուծվել է կորելյացիայի երկսերիալ գործակցի միջոցով: Վիճակագրական նշանակալիությունը գնահատվել է Ստյուդենտի t գործակցի մեթոդի օգնությամբ:

3. Միջակայքային սանդղակով գործոնների համալիր ազդեցության բազմագործոն վերլուծությունը իրականացվել է դիսկրիմինանտ վերլուծության միջոցով:

4. Նոմինալ սանդղակով գործոնների համալիր ազդեցության վերլուծությունը իրականացել է համալուծությունների աղյուսակների միջոցով: Տարբերությունների նշանակալիությունը գնահատվել է Պիրսոնի x^2 չափանիշի միջոցով:

Ատենախոսության երրորդ՝ «Էմպիրիկ հետազոտության հիմնական արդյունքները» գլուխը բաղկացած է վեց ենթագլխից:

Առաջին «**Դատապարտյալների անամնեստիկ տվյալների վերլուծության արդյունքները**» ենթագլխում նկարագրված են աուտոագրեսիվ վարքի ռիսկի անամնեստիկ գործոնները: Ստորև ներկայացնում ենք ստացված արդյունքները աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 1. Աուտոագրեսիվ վարքի ռիսկի անամնեստիկ գործոններ

1.Սոցիալական միջավայրի ոչ ադեկվատ ընկալում	2.Կոնֆլիկտային սոցիալական միջավայր	3.Վարքի աուտոագրեսիվ նմուշօրինակ
1.1.Հոր բացակայություն վաղ մանկությունում, 1.2.«մայրիշխանական» ոճ ընտանեկան հարաբերություններում, 1.3.գերխնամք, 1.4.ընտանիքում առկա են հոգեկան հիվանդներ:	2.1.Չհասկացվածություն, մերժվածություն մանկական և պատանեկան տարիքում, 2.2.Ընտանիքի անդամների կողմից ալկոհոլի չարաշահում, 2.3.հաճախակի կոնֆլիկտներ ընտանիքում 2.4.ծնողների ամուսնալուծություն, 2.5.անհաջողություններ դեռահասության տարիքում՝ մեկուսացում կոլեկտիվից, անհաջողություններ ուսման մեջ և այլն, 2.6. տնից փախուստներ, 2.7.ուսման, աշխատանքի վայրի հաճախակի փոփոխում (կոնֆլիկտների պատճառով):	3.1. Ինքնասպանություն ընկերների, ծանոթների, բարեկամների շրջանում:

Երկրորդ՝ «**Աուտոագրեսիա իրականացրած դատապարտյալների անձնային գործոնների վերլուծության արդյունքները**» ենթագլխում ներկայացված է աուտոագրեսիայի ձևավորման վրա գործոնների ազդեցության վերլուծությունը, որն իրականացվել է երկու ուղղությամբ.

1. Աուտոագրեսիա պայմանավորող առանձին նշանակալի գործոնների բացահայտում:

2. Աուտոագրեսիվ վարքի ձևավորման վրա գործոնների համալիր ազդեցության գնահատում:

Երրորդ՝ «**Դատապարտյալների աուտոագրեսիվ վարքի ձևավորման վրա սոցիալական միջավայրի ազդեցության վերլուծություն**» ենթագլխում ներկայացված է սոցիալական մեկուսացման պայմաններում սոցիալական միջավայրի ազդեցության վերլուծությունը, որտեղ անդրադարձ է կատարվել հետևյալ գործոններին.

- փոխհարաբերություններն այլ դատապարտյալների հետ,
- փոխհարաբերությունները ՔԿ աշխատակիցների հետ,
- փոխհարաբերությունները մտերիմների հետ:

Ինչպես ցույց տվեցին հետազոտության արդյունքները, սուիցիդալ վարքի ձևավորման վրա ազդում են սոցիալական միջավայրի բոլոր երեք գործոնները: Սակայն, ի տարբերություն սուիցիդալ վարքի՝ դեմոնստրատիվ-շանտաժային վարքը կորելյացվում է միայն «Փոխհարաբերությունները ՔԿ աշխատակիցների հետ» գործոնի հետ:

Աղյուսակ 2. Աուտոագրեսիվ վարքի կախվածությունը սոցիալական միջավայրի գործոնների ազդեցությունից

	Փոխհարաբերություններն այլ դատապարտյալների հետ		Փոխհարաբերությունները ՔԿ աշխատակիցների հետ		Փոխհարաբերությունները մտերիմների հետ	
	Կորելյացիոն գործակից	t հայտանիշ	Կորելյացիոն գործակից	t հայտանիշ	Կորելյացիոն գործակից	t հայտանիշ
Սուիցիդալ վարք	0,32	12,18	0,27	10,83	0,43	14,22
Դեմոնստրատիվ-շանտաժային վարք	0,11	27,65	0,31	11,87	0,08	33,14

Չորրորդ՝ «**Աուտոագրեսիա իրականացրած դատապարյալների ադապտիվության մակարդակի հետազոտության արդյունքները**» ենթագլխում ներկայացված է «Ադապտիվություն» անձնային բազմամակարդակ հարցարանի վերլուծության արդյունքները, ըստ որի՝ ՆՀԿ (նյարդահոգեկան կայունություն) և ԱԱՆ (անձնային ադապտիվության ներուժ) սանդղակները կորելացվում են դատապարտյալների սուիցիդալ վարքի հետ:

Նյարդահոգեկան կայունության մակարդակի բարձրացման դեպքում փոքրանում է սուիցիդալ վարքի ձևավորման հավանականությունը, և հակառակը: Նույնը կարելի է ասել նաև անձնային ադապտիվության ներուժի մասին. ինչքան վերջինս բարձր է, այնքան փոքր է սուիցիդալ վարքի ձևավորման հավանականությունը:

Դեմոնստրատիվ-շանտաժային վարք դրսևորող անձանց մոտ նույնպես կապ է դիտվում նյարդահոգեկան կայունության հետ, սակայն այս դեպքում անձնային ադապտիվության ներուժը գրեթե չի ազդում տվյալ տեսակի աուտոագրեսիայի ձևավորման վրա: Մյուս կողմից ազդեցություն է սկսում թողնել բարոյական նորմատիվությունը:

Աղյուսակ 3. Աուտոագրեսիվ վարքի դեպքում «Ադապտիվություն» անձնային բազմամակարդակ հարցարանի սանդղակների կորելյացիա

	Սուիցիդալ վարք		Դեմոնստրատիվ-շանտաժային վարք	
	Կորելյացիոն գործակից	t հայտանիշ	Կորելյացիոն Գործակից	t հայտանիշ
ՆՀԿ	-0,34	2,79	-0,44	3,57
ԿԸ	-0,11	11,83	0,19	11,88
ԲՆ	0,09	20,92	-0,51	3,72
ԱԱՆ	-0,51	4,74	0,16	11,81

Հինգերորդ՝ «**Աուտոագրեսիվ վարքի ձևավորման վրա հուզական ոլորտի ազդեցության աստիճանի վերլուծության արդյունքները**» ենթագլխում ներկայացված է աուտոագրեսիվ վարքի կախվածությունը դատապարտյալների շրջանում դեզադապտացիայի առկայությունից, որի վերլուծության համար կիրառել ենք 2x2 համալուծության աղյուսակը:

Վեցերորդ՝ «**Աուտոագրեսիվ վարքի վրա գործոնների տարբեր խմբերի համալիր ազդեցության վերլուծություն**» ենթագլխում սուիցիդ իրականացրած դատապարտյալների ընտրանքը և դեմոնստրատիվ-շանտաժային վարք իրականացրած դատապարտյալների ընտրանքը միավորել ենք մեկ ընտրանքի մեջ՝ դատապարտյալներ, որոնք դրսևորում են աուտոագրեսիվ վարք և դիտարկել աուտոագրեսիվ վարքի վրա գործոնների խմբերի ազդեցության բաշխվածությունը:

Աղյուսակ 4. Աուտոագրեսիվ վարքի կախվածությունը դեզադապտացիայի և շրջապատող սոցիալական միջավայրի հետ կոնֆլիկտների համալիր ազդեցությունից

	Դեզադապտացիա և կոնֆլիկտներ սոցիալական միջավայրի հետ	Չկան դեզադապտացիա և կոնֆլիկտներ սոցիալական միջավայրի հետ
Իրականացրել է աուտոագրեսիա	28	1
Չի իրականացրել աուտոագրեսիա	120	230

Աղյուսակ 5. Աուտոագրեսիվ վարքի վրա գործոնների խմբերի ազդեցության բաշխվածությունը

	Անձնային գործոնները նպաստում են աուտոագրեսիայի ձևավորմանը				Անձնային գործոնները չեն նպաստում աուտոագրեսիայի ձևավորմանը			
	Սոց.միջավայրում կան կոնֆլիկտներ		Սոց.միջավայրում չկան կոնֆլիկտներ		Սոց.միջավայրում կան կոնֆլիկտներ		Սոց.միջավայրում չկան կոնֆլիկտներ	
	Դեպրեսիա	Դեպրեսիայի բացակայություն	Դեպրեսիա	Դեպրեսիայի բացակայություն	Դեպրեսիա	Դեպրեսիայի բացակայություն	Դեպրեսիա	Դեպրեսիայի բացակայություն
Է իրականացրել	18	2	12	1	10	1	3	0
Չի իրականացրել	58	21	84	26	62	18	8	204

$\chi^2_{էմպ} = 5{,}56$ $\chi^2_{կր} = 6{,}36$ դեպքում P<0,01 համար: Ստացված արժեքն ընկած է նշանակելիության միջակայքում, հետևաբար, բոլոր երեք գործոնների ազդեցությունը փոխադարձաբար ուժեղանում է աուտոագրեսիվ վարքի ձևավորման դեպքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սոցիալական մեկուսացման պայմաններում դատապարտյալների աուտոագրեսիվ վարքի հոգեբանական հիմքերը ուսումնասիրելուց և գիտատեսական վերլուծությունից հետո հանգեցինք հետևյալ եզրակացություններին:

1. Աուտոագրեսիվ վարքի հոգեբանական ուսումնասիրությունները և հետազոտությունները քննարկում են հիմնախնդրի բնույթը, տեսակները, երևույթի զարգացման կենսաբանական արմատները, սոցիալական հիմքերը, անձնային հոգեբանական գործոնները, սոցիալական արժեքները և նորմերը:

Այնուհանդերձ աուտոագրեսիվ դրսևորումները կարելի է դասակարգել երկու հիմնական խմբի, որոնք փոխկապակցված են և ազդում են մեկը մյուսի վրա:

2. Հասարակությունից հարկադիր մեկուսացման ենթարկված անձանց մոտ դրսևորվում են անձի և նրա վարքի հետևյալ բաղադրիչների փոփոխություն. դրդապատճառային, արժեքային, իմացական, հուզակամային: Ինչպես նաև սոցիալական մեկուսացումը, քրեական սուբկուլտուրայի ազդեցությունը, սոցիալական հարմարման դեստրուկտիվ հետևանքներն արտահայտվում են դատապարտյալի անձի բացասական փոփոխություններով՝ հանգեցնելով վարքում արտաքին, ֆիզիկական և վերբալ ագրեսիայի, աուտոագրեսիայի:

3. Մեր ուսումնասիրությունները թույլ են տալիս դատապարտյալներին համարել իրական ռիսկային խումբ: Սոցիալական նշանակալի կապերի խաթարումը, ազատազրկման ընթացքում կյանքի փոփոխվող պայմաններին հարմարվելու անկարողությունը դատապարտյալին ռեսոցիալիզացիայի գործընթացում հանգեցնում են աուտոագրեսիայի:

4. ՔԿ հիմնարկներում իրենց պատիժը կրող դատապարտյալների աուտոագրեսիվ վարքը պայմանավորված է սոցիալ-հոգեբանական գործոններով, անձնային առանձնահատկություններով, միջավայրով, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, էքստրեմալ իրավիճակներով և դրանց ոչ ճիշտ գնահատականներով: ՔԿ հիմնարկներում դատապարտյալների աուտոագրեսիվ վարքին նպաստող անձնային առանձնահատկությունների ձևավորման հիմքում ընկած են դաստիարակության առանձնահատկությունները և մանկական տարիքում վարքի դեստրուկտիվ շաբլոնների յուրացումը: Աուտոագրեսիա իրականացնող դատապարտյալներին բնորոշ են հետևյալ հոգեբանական առանձնահատկությունները՝ հուզական անկայունությունը, հակվածությունը մեղքի զգացման նկատմամբ, ռիգիդությունը, վարքի ինքնակառավարումը, ֆրուստրացվածությունը: Եթե այս գործոնների դիսկրիմինանտ ֆունկցիան մեծ կամ հավասար է 1,31, ապա տվյալ դատապարտյալն անձնային բնութագրիչներով նախատրամադրված է աուտոագրեսիվ վարքի:

5. Աուտոագրեսիվ վարքի ձևավորմանը նպաստող հիմնական սոցիալ-հոգեբանական դետերմինանտներն են կոնֆլիկտները շրջապատի հետ, սոցիալական մեկուսացումը և սոցիալական կապերի բացակայությունը: Ընդ որում, եթե սուիցիդալ վարքի ձևավորման համար էական են բոլոր երեք գործոններն էլ, ապա ցուցադրական-շանտաժային վարքի դեպքում միայն մեկն էլ, մասնավորապես՝ հարաբերություններն աշխատակիցների հետ, բավարար է:

6. Դեզադապտացիայի առկայությունը վկայող հիմնական նշաններն են դեպրեսիայի և տագնապի վառ արտահայտվածությունը, ինչպես նաև ըստ Լյուշերի թեստի -2-1, -2-3, -3-4 դիրքերը: Նման վիճակը կարող է սուիցիդալ վարքի

ձևավորման նախապայման դառնալ, իսկ ցուցադրական շանտաժային վարքի դեպքում դեզադապտացիայի վիճակը նշանակալի չէ:

7. Դատապարտյալների անամնեստիկ տվյալների վերլուծության արդյունքներից ելնելով, ըստ ընտանեկան անամնեզում ռիսկի գործոնի առկայության՝ կարելի է բաժանել երեք խմբի.

ա) սոցիալական միջավայրի ոչ ադեկվատ ընկալում,

բ) կոնֆլիկտային սոցիալական միջավայր,

գ) վարքի աուտոագրեսիա:

8. Անցկացված ուսումնասիրությունները և գիտափորձի արդյունքները փաստում են, որ կարելի է պնդել մեր կողմից առաջ քաշված վարկածի, նպատակի, կիրառված մեթոդիկաների հավաստիությունը, ինչը կարող է նաև համակարգված կանխարգելմանն ուղղված գիտագործնական առաջարկներ ծառայել ՔԿ հիմնարկի սոցիալ, իրավական և հոգեբանական ծառայության աշխատակիցների և առավել նեղ մասնագիտական խմբերի համար:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը արտացոլված է հեղինակի հրատարակված հետևյալ աշխատանքներում՝

1. Այվազյան Ա. Գ., Անձի վրա հասարակությունից հարկադիր մեկուսացման ազդեցության հոգեբանական վերլուծություն, Ժողովածու, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90 ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, »Նոր ուսուցիչ նոր դպրոցի համար» Մանկավարժական կրթության բարեփոխման հեռանկարներ. տեսություն և պրակտիկա, 2012 դեկտեմբերի 14, I ՊՐԱԿ, 264-267 էջ:

2. Այվազյան Ա. Գ., Դատապարտյալների աուտոագրեսիվ վարքի դրսևորման որոշ հարցերի մասին, Դատական իշխանություն: Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Անտարես», 4 (165) 2013 ապրիլ, 72-75 էջ:

3. Այվազյան Ա. Գ., Հանցավորի անձի ուսումնասիրության հարացույցային մոտեցումների մասին, Դատական իշխանություն: Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Անտարես», 5 (166) 2013 մայիս, 78-81 էջ:

АЙВАЗЯН АНЖЕЛИКА ГАГИКОВНА

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ АУТОАГРЕССИВНОГО ПОВЕДЕНИЯ ОСУЖДЕННЫХ В УСЛОВИЯХ СОЦИАЛЬНОЙ ИЗОЛЯЦИИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03. “Социальная психология (межличностные отношения, семейная, групповая деятельность)”
Защита диссертации состоится 11-го ноября 2014 г. в 12.00 на заседании специализированного совета философии и психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном университете им. Х. Абовяна по адресу: 0010, г. Ереван, у. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность темы.

В современном мире, в котором человеческая жизнь и ее неприкосновенность приобрели большую ценность, вопрос реформирования уголовно- исполнительной системы стоит довольно-таки остро. В настоящее время задачей пенитенциарной службы стало обеспечение физической и психологической целостности и безопасности личности в местах лишения свободы. В этом процессе имеет большое значение предотвращение и профилактика аутоагрессивного поведения осужденных.

Социальная изоляция вообще и уголовно-исполнительные заведения в частности создают тяжелые условия для проживания, и пребывание в подобных заведениях негативно влияет на психику находящихся в них лиц: у осужденных наблюдаются тревожность, импульсивность, агрессивность и ряд других личностно-психологических изменений.

В контексте вышесказанного в последние годы особую актуальность приобрела именно проблема аутоагрессивного поведения в среде осужденных в связи с ее распространенностью и широким спектром проявления.

Руководствуясь вышеизложенным, можно сказать, что актуальность нашего исследования обусловлена необходимостью разработки соответствующей научно обоснованной и экспериментально проверяемой психокорректирующей программы, которая позволит предотвратить действия осужденных, направленные на нанесение ущерба собствнному здоровью и жизни, их негативные последствия и вероятность повторения в будущем.

Целью исследования

является изучение и обоснование социально-психологических и социально-демографических факторов, способствующих формированию аутоагрессивного поведения осужденных, находящихся в уголовно-исполнительных учреждениях.

Задачи исследования.

1. Изучить и обобщить исторические источники и научные обоснования, касающиеся проявлений аутоагрессивного поведения, для определения степени разработанности проблемы и выделить основные виды аутоагрессивного поведения.

2. Осуществить теоретический анализ негативных изменений у лиц, подвергшихся принудительной изоляции от общества.

3. Исследовать личностные, социально-психологические и ситуативные факторы, обуславливающие аутоагрессивные действия осужденных.

4. Выбрать и обосновать систему методик, которая позволит изучить проявления аутоагрессивного поведения осужденных.

5. Экспериментально уточнить причины и основы осуществления аутоагрессивных действий.

6. На основе результатов исследования разработать научно обоснованные практические предложения, направленные на предотвращение и психокоррекцию аутоагрессивного поведения осужденных.

Научная новизна исследования.

Принимая в качестве основы передовой международный опыт, впервые были исследованы социально-психологические механизмы аутоагрессивного поведения осужденных в уголовно-исполнительных учреждениях РА, их взаимовлияния и взаимосвязь, была разработана группа систематизированных методик, позволяющих диагностировать и предупреждать в нашей реальности аутоагрессивное поведение осужденных в уголовно-исполнительных учреждениях. В результате были выдвинуты научно-практические предложения, направленные на предотвращение аутоагрессивного поведения осужденных.

Теоретическая значимость исследования.

Проведенный в уголовно-исполнительных учреждениях РА анализ и его обобщение, выявленные механизмы, содержание, а также особенности факторов формирования аутоагрессивного поведения осужденных позволяют теоретически обосновать их взаимовлияния и взаимосвязь, содействуя процессу предотвращения аутоагрессивного поведения.

Надежность полученных данных обусловлена степенью валидности применяемых методов. В ходе исследований было сохранено единообразие условий и ситуации проведения исследования, был стандартизирован процесс исследования, что предполагает, что психологические методики применялись в определенной последовательности, в тот же временной период с четко отрегулированными перерывами. Необходимой предпосылкой исследования была также стандартность методик и их инструкций.

Практическая значимость исследования.

Результаты проведенного исследования могут стать психологическим научным направлением для психологов, изучающих данную задачу, а также использоваться в качестве руководства в психологической практике.

Достоверность и обоснованность.

Проведенные исследования обеспечены высокой надежностью и валидностью использованных методов, каличеством методов и исследованных осужденных, качественным и количественным анализом полученных данных.

Структура работы.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы.

По теме диссертации опубликованы 3 стати.

ANZHELIKA GAGIK AYVAZYAN

THE PSYCHOLOGICAL BASES OF AUTOAGGRESSIVE CONDUCT OF PRISONERS IN CONDITIONS OF SOCIAL ISOLATION

19.00.03 “Social psychology (interpersonal relationships, family, group activity)”

The abstract of the dissertation of requesting scientific degree of the candidate of psychological sciences by profession

The defence of the dissertation will be held on the 11th of November, 2014 at 12.00 at session of the Special Board of philosophy and psychology 064 HAC (Higher Attestation Commission) on awarding degrees under the Kh. Abovyan Armenian State Pedagogical University, address: Tigran Mets 17 Avenue, 0010 Yerevan.

SUMMARY

The actuality of the research:

In modern world, where human life and its inviolability have great importance, the issue of the reform of the penal system is quite sharp. Now the main problem of penitential service is to provide physical and psychological integrity and security of person in places of detention. The prediction and prevention of the prisoners’ auto-aggressive conduct have great importance in this process.

Social isolationin general, and penal institutions in particular, have tough conditions for living, the appearance in it has a negative impact on the psychology of people living there, and anxiety, impulsiveness, aggressiveness and several other personal-psychological changes are noticed in prisoners.

In the context of above mentioned, the problem of auto-aggressive conduct among prisoners has become highly actual during recent years, connected with the degree of their prevalence, as well as witha wide spectrum of expression.

Motivated by the above mentioned, the actuality of our research is conditioned by the necessity of developing an appropriate psycho-corrective program which is scientifically grounded and tested through experiments, which will give an opportunity to prevent the prisoners’ activities directed to harming their own health and life, their negative consequences and the probability of further reoccurrence.

The aim of the research:

is to explore and substantiate the social-psychological and social-demographic factors contributing to the formation of auto-aggressive conduct of the prisoners of penal institutions.

The objectives are:

1. To study and generalize historical resources and scientific substantiations about displays of auto-aggressive conduct by distinguishing the basic types of auto-aggressive conduct in order to characterize the degree of preparedness of the problem.

2. To implement theoretical analysis about the negative changes appeared in people who are subjected to forced isolation from society.

3. To study personal, social-psychological and situational factors conditioning the auto-aggressive conduct of the prisoners.

4. To choose and substantiate the system of methods, which will give an opportunity to study the forms of the prisoners' auto-aggressive conduct.

5. To clarify the reasons and bases of auto-aggressive conduct by experimental way.

6. To develop scientifically substantiated practical recommendations based on the results of the research, which will be directed to the prediction and psycho-correction of prisoners' auto-aggressive conduct.

The scientific novelty of the Research:

Having as a base the global leading experience, the social-psychological mechanisms of prisoners' auto-aggressive conduct, their interactions and interconnections have been studied, the group of coordinated methods has been developedfor the first time in RA penal institutions which has given an opportunity todiagnose and predict the auto-aggressive conduct of prisoners in penal institutions in our reality, in the result of which scientific and practical suggestions directed to the prevention of prisoners' auto-aggressive conduct have been put forward.

The theoretical significance of the Research:

The analysis made in RA penal institutions and their summaries, revealed mechanisms, content of the prisoners' auto-aggressive conduct, as well as characteristic features of the formation factors give an opportunity to substantiatetheoretically their interactions and interconnections making surmountable the prevention process of auto-aggressive conduct.

Practical importance of the research:

The results of the survey can serve as psychological scientific paradigm for psychologists studying the problem; besides the outcomes can also be used as recommendations in practical psychology.

The reliability of the obtained results

is conditioned by the degree of validity of the applied methods. During the research, the stability of conditions and situation of the research has been preserved, the process of the research has been standardized, which implies that the psychological methods have been used by certain sequence, in the same period of time and by clearly regulated intervals. The necessary precondition of the research was the stability of the methods and their instructions.

The structure of the research:

The dissertation consists of introduction, three chapters, conclusions and bibliography.

3 articles are published relevant to the topic of dissertation.